ԸՆԴՈՒՆՎՈՒՄ ԵՆ ՎԻԿՏՈՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿԻ 2020Թ. ՀԱՅՏԵՐԸ

Վիկտոր Համբարձումյանի անվան միջազգային գիտական մրցանակն աստղագիտության/աստղաֆիզիկայի և հարակից ոլորտների ամենակարևոր մրցանակներից մեկն է: Այն տրվում է ֆիզիկամաթեմատիկական գիտություններում նշանակալի ներդրումներ ունեցող գիտնականներին աշխարհի տարբեր երկրներից: Մրցանակը տրվում է 2010թ-ից ի վեր 2 տարին մեկ անգամ: 2010–2016թթ ՀՀ կառավարության կողմից որպես մրցանակ էր սահմանվել 500,000 ԱՄՆ դոլար: 2017թ-ից մրցանակը կազմում է 300,000 ԱՄՆ դոլար: 2019թ-ից Վիկտոր Համբարձումյանի անվան միջազգային գիտական մրցանակը դասվում է ՀՀ պետական մրցանակների շարքին:

Մրցանակի համար կարող են ներկայացվել ինչպես անհատական, այնպես էլ խմբային (3 համահեղինակից ոչ ավելի) աշխատանքներ: Դրամական պարգևը հավասար բաժանվում է հաղթողների միջև, ինչից զատ յուրաքանչյուր հաղթող ստանում է վկայական, շքանշան և հավաստագիր:

Հաղթող(ներ)ը ստանում է 200,000 ԱՄՆ դոլար՝ որպես անձնական մրցանակ, իսկ մնացյալ 100,000 ԱՄՆ դոլարն օգտագործվում է Հայաստանի գիտնականների հետազոտական նախագծերի և արտասահմանյան աշխատակցությունների, Հայաստանում գիտական միջոցառումների կազմակերպման, ինչպես նաև հայ ուսանողներին կրթաթոշակ հատկացնելու նպատակով (այս ամենը կատարվում է Մրցանակի հանձնաժողովի և տվյալ տարվա հաղթողների հսկողության ներքո):

Թեկնածություն կարող են առաջադրել՝

- Նոբելյան մրցանակակիրները
- Գիտությունների ազգային ակադեմիաների նախագահությունները
- Աստղադիտարանների կամ աստղագիտական ինստիտուտների գիտական խորհուրդները

- Համալսարանների համապատասխան բաժինների գիտական խորհուրդները

Վիկտոր Համբարձումյանի անվան միջազգային գիտական մրցանակին չի թույլատրվում առաջադրել այն աշխատանքը, որն արդեն արժանացել է վերոնշյալ մրցանակին կամ միևնույն ժամանակ ներկայացված է մեկ այլ միջազգային մրցանակի:

Անհրաժեշտ փաստաթղթեր

1. Թեկնածության առաջադրման պաշտոնական նամակ՝ կնքված համապատասխան կառույցի կողմից,
2. Ներկայացված աշխատանքի գիտական արդյունքի կամ նվաճումների վերաբերյալ նկարագրություն (2 էջի սահմաններում) ,
3. Թեկնածու(ներ)ի գիտական կենսագրականները,
4. Թեկնածու(ներ)ի գրախոսվող աշխատանքների ցանկը,
5. Երաշխավորագիր տվյալ ոլորտում հայտնի 3 գիտնականների կողմից,
6. Տպագրված հոդվածներ, գրքեր, CD/DVD-ներ, կամ այլ առաջադրված աշխատանքներ,
7. Այլ փաստաթղթեր, որոնք կարող են կարևոր լինել որոշման կայացման գործընթացում:

Փաստաթղթերն անհրաժեշտ է ներկայացնել

Վիկտոր Համբարձումյանի անվան միջազգային գիտական մրցանակի միջազգային հանձնաժողով
ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի նախագահություն
Երևան 0019, Մարշալ Բաղրամյան պողոտա 24
Հեռ.՝ +374-10-525505

Դիմելու վերջնաժամկետն է

2020թ. մարտի 18-ը:

Արդյունքները հայտնի կլինեն մինչև 2020թ. հուլիսի 18-ը, իսկ Վիկտոր Համբարձումյանի անվան միջազգային գիտական մրցանակի հանձնման արարողությունը տեղի կունենա 2020թ. սեպտեմբերի 18-ին:

Վիկտոր Համբարձումյանի անվան միջազգային գիտական մրցանակի հանձնաժողով

Պրոֆ. Ռադիկ Մարտիրոսյան (ՀՀ, նախագահ, president@sci.am)

Պրոֆ. Խավիեր Բարկոնս (Գերմանիա, xbarcons@eso.org)

Պրոֆ. Անատոլի Չերեպաշչուկ (ՌԴ , director@sai.msu.ru)

Պրոֆ. Միշել Մայոր (Շվեյցարիա, michel.mayor@unige.ch)

Պրոֆ. Վահե Պետրոսյան (ԱՄՆ, vahep@stanford.edu)

Պրոֆ. Բրայան Շմիդտ (Ավստրալիա, brian@mso.anu.edu.au)

Պրոֆ. Ջոզեֆ Սիլք (Մեծ Բրիտանիա, silk@astro.ox.ac.uk))

Պրոֆ. Երվանդ Թերզյան (ԱՄՆ, terzian@astro.cornell.edu)

Պրոֆ. Էվին վան Դիսխուկ (Նիդերլանդներ, ewine@strw.leidenuniv.nl)

Հետադարձ կապ

Դր Արեգ Միքայելյան՝ (Միջազգային հանձնաժողովի գիտական քարտուղար, հեռ.՝ +374-91-195914, էլ. հասցե՝ aregmick@yahoo.com).

Սոնա Ֆարմանյան (Միջազգային հանձնաժողովի գործադիր քարտուղար, հեռ.՝ +374-10-525505, +374-55-911307, էլ. հասցե՝ sona.farmanyan@mail.ru, vaprize@sci.am)

Վիկտոր Համբարձումյանի անվան միջազգային գիտական մրցանակի կայքէջ՝

www.vaprize.sci.am